

Տարվելով արագ ձեռք բերվող բարիքներով տենդագին հաճույք ստանալով՝ քաղաքացիները հասարակական գործերի վարույթը հանձնում են պետությանը և շուտով կորցնում են այն բոլոր հատկանիշները, որոնք ստեղծել են նրանց երբեմնի մեծությունը: Այդ ժամանակ հարևան բարբարոսներն ու կիսաբարբարոսները, ունենալով շատ փոքր պահանջմունքներ և շատ ինտենսիվ իդեալ, արշավանք են իրականացնում չափից ավելի քաղաքակիրթ ժողովրդի դեմ, ոչնչացնում են նրան և փլուզված քաղաքակրթության ավերակների վրա ստեղծում են նորը¹:

Գուստավ Լե Բոն (Gustave Le Bon)

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵԿԵՇԻՌԸ*

1988 թ. փետրվարին սկսված Ղարաբաղյան շարժումը 1990-ականների սկզբներից փոխակերպվելով Հայաստանի երրորդ Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ձևավորման գուգահեռ գործընթացների՝ իր գաղափարներն ու նպատակները փոխանցեց ազգերի մրցակցության ու համագործակցության համաշխարհային թատերաբեմում հայությանը ներկայացնող պետական կազմավորումներին:

Իսկ **Շարժման** նման վերակերպավորմանը հաջորդած Ղարաբաղյան պատերազմը արձանագրեց ոչ միայն հայրենի տարածքների մի մասի ազատագրման, այլև Մեծ եղեռնից հետո հայությանը համակած գոհի բարդույթի հաղթահարման իրողությունները²: Ուստի հետպատերազմյան տարիներին՝ Ղարաբաղյան հակամարտության չկարգավորված լինելու պայմաններում, այս ձեռքբերումները պահպանելու և ամրապնդելու խնդիրն անխուսափելիորեն տեղափոխվեց Ադրբեջանի հետ ռազմավարական դիմակայության հարթություն: Սկսվեց հայ-ադրբեջանական հեռակա մրցակցություն կյանքի բոլոր բնագավառներում՝ քաղաքակա-

* Ընդունվել է տպագրության 10.03.2013:

1 Г. Лебон, Психология народов и масс, <http://lib.ru/POLITOLOG/LEBON/psihologia.txt>

2 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Հարություն Տ. Մարությանի** «Ցեղասպանության գոհի բարդույթի հաղթահարումը Ղարաբաղյան շարժման տարիներին» հրապարակումը «Վէմ»-ի ներկա համարում:

նությունից մինչև տնտեսություն, բանակաշինություն, մշակույթ և անգամ պատմության գիտական ուսումնասիրություն:

Նման պայմաններում **Ժամանակի գործոնի վճռորոշ դերակատարությունը** գիտակցելու առաջադրանքը շարունակաբար ստիպել և այսօր էլ ստիպում է մեզ խորությամբ ընկալելու և ինքներս մեզ համար վերաիմաստավորելու ռազմարվեստի մեծագույն տեսաբան **Կարլ ֆոն Կլաուզ-Լիցի** «Պատերազմը քաղաքականության շարունակությունն է, սակայն այլ միջոցներով»³ եզրահանգումը: Քանզի անցած տասնամյակներում այս թեմայի տրամաբանությունը մեզ համար շրջվել ու վերածվել է «Քաղաքականությունն էլ պատերազմի շարունակությունն է, սակայն այլ միջոցներով» բանաձևի: Սրանից բխում է, որ Ղարաբաղյան շարժմանն ու պատերազմին հաջորդած տարիներին մեր հավատարմությունը Շարժման իդեալներին ու նահատակ-ագատամարտիկների հիշատակին **ուղիղ համեմատական** է հայկական երկու պետությունների ներուժ-կարողականության մեծացման և **հակադարձ համեմատական**՝ Ադրբեջանի համեմատ նրանց հնարավորությունների նվազման միտումին:

Անշուշտ, գնահատման այս ձգգրիտ ու առարկայական չափանիշը վիճակագրական տվյալների համեմատական քննության դաշտ տեղափոխելու համար հարկ է որոշակի սրբագրումներ կատարել մեզանում ու մանավանդ՝ Ադրբեջանում հաճախ արհեստականորեն ուռձացվող պաշտոնական թվերի մեջ: Սակայն դրանցում միանգամայն հնարավոր մասնակի անձշտությունները և անգամ պաշտոնական Բաքվին դեռևս խորհրդային շրջանից բնորոշ վիճակագրական աճպարարությունները⁴ որևէ կերպ չեն կարող քողարկել անցած տարիներին արձանագրված այն հիմնական միտումները, որոնց հետ բախվում ենք ամեն քայլափոխի:

Ղարաբաղյան պատերազմի նախօրեին՝ 1980-1990-ականների սահմանագծին, Հայաստանն ու Ադրբեջանը, իսկ ավելի լայն՝ տարածաշրջանային առումով, հայերն ու ադրբեջանցիները ունեին **համեմատելի** տնտեսական և ժողովրդագրական ցուցանիշներ, որոնց առկայության պայմաններում առաջին պլան էր դուրս եկել նարդկային գործոնը՝ որակական հատկանիշների իր ողջ գունապնակով. միտք, հմտություն, կազմակերպվածություն և հավատ: Դա պայմանավորված էր նրանով, որ 1960-1980-ականներին Խորհրդային Հայաստանը տպավորիչ հաջողություններ էր արձանագրել երկրի արդյունաբերականացման և իր փոքր տարածքներում հայության համեմատաբար մեծ զանգվածներ կենտրոնացնելու գործում:

Ավելին՝ 1980-ականների վերջերին մեր երկրի ունեցած մոտ **3,5 միլիոն** ազգաբնակչությամբ և դրան գումարած՝ յուրաքանչյուրը 400-450 հազարի սահմանագծին տատանվող ադրբեջանահայությամբ և վիրահայությամբ, տարածաշրջանի ողջ հայությունը մոտավոր հաշվարկներով կազմում էր Ադրբեջանի ոչ հայկական և Հարավային Կովկասի ադրբեջանական բնակչության ընդհանուր թվաքանակի կեսից ավելին. մոտ **4,4 միլիոն**՝

3 **Клаузевиц К.** О войне.- М.: Госвоениздат, 1934. Часть первая. Глава первая. 24. <http://militera.lib.ru/science/clausewitz/01.html>

4 Ադրբեջանի առանձին բնակավայրերում գրանցվածների ու փաստացի կերպով բնակվողների ցուցակների և այլ տվյալների մեր համեմատական քննության արդյունքները անցած տարիներին ցույց են տվել, որ հարևան երկրում իրականացվող ժողովրդագրական աճպարարությունները գտնվում են 30-33 տոկոսի սահմաններում: Խմբ.:

7,2 միլիոնի դիմաց, ինչը միանգամայն համեմատելի ցուցանիշ էր⁵:

Հաջորդ տասնամյակում, անգամ 1988 թ. երկրաշարժից ու Ղարաբաղյան պատերազմից հետո էլ, Հայաստանը սկզբունքորեն չէր զիջում Ադրբեջանին՝ նաև իր տնտեսության հիմնական ցուցանիշներով: Այսպես՝ պատերազմից ընդամենը 3 տարի անց՝ 1997-ին, ըստ «Տասիսի» 2000 թ. հրատարակած Հարավկովկասյան տարածաշրջանի վիճակագրական տարեգրքի՝ Հայաստանի պետությունների եկամտային մասը եղել է **350,1**, իսկ Ադրբեջանինը՝ **599,2** միլիոն դոլար, այսինքն՝ մոտ 1,5 անգամով ավելի⁶:

Նման պայմաններում սկզբունքային նշանակություն չունեցավ նույնիսկ ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած զինամթերքի քանակության առումով մարտական գործողությունների սկզբում Ադրբեջանի ձեռք բերած մեծ առավելությունը: Փորձագիտական գնահատականներով՝ այն դիտարկվում էր **22 անգամի** սահմաններում, քանի որ մինչև 1991 թվականը Ադրբեջանում էին գտնվում ԽՍՀՄ-ի Անդրկովկասյան ռազմական օկրուգի հիմնական թիկունքային զինապահեստները, որոնք, բնականաբար, թալանվեցին ժողձակատի կողմից⁷: Այս որոշ չափով ուռճացված ցուցանիշն անգամ խոչընդոտ չդարձավ Ղարաբաղյան պատերազմում ձեռք բերված հաղթանակի համար, որովհետև հայկական կողմը նորանկախ Ռուսաստանի հանդեպ հաշվենկատ քաղաքականության և այլ միջոցներով գտավ նման առավելությունը չեզոքացնելու հնարավորություններ:

Ավելին՝ Ղարաբաղյան շարժումն ու դրան հաջորդած պատերազմը 1990-ականների առաջին կեսին զգալիորեն կրճատեցին մեր հակառակորդ Ադրբեջանի քանակական գերակշռությունը թե՛ տարածքների, թե՛ տնտեսական ներուժի և թե՛ մարդուժի տեսանկյունից: Արդյունքում՝ թեև պատերազմից հետո էլ Ադրբեջանն ուներ որոշ՝ զուտ թվաբանական առավելություններ, սակայն երկու երկրների⁸ կարևորագույն ցուցանիշները արդեն **ավելի քան համեմատելի, նույնիսկ հավասարագոր մեծություններ** էին: Եվ իրականում՝ սա էր Ղարաբաղյան պատերազմի այն ռազմավարական ձեռքբերումը, ինչը հետպատերազմյան տասնամյակներում թույլ էր տալիս վստահությամբ նայել մեր ապագային:

Սակայն սկսած 2000-ականների կեսերից՝ «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան»

5 ՀՀ բնակչության թիվը 1989 թ. մարդահամարի տվյալներով կազմել է 3.448.600 մարդ: Տես Վիճակագրական տարեգիրք, 2010 թ., էջ 26: Ադրբեջանի բնակչությունը 7 միլիոն էր, որից պաշտոնական տվյալներով՝ 390.500 հայ: Այս թիվն, անշուշտ, ամբողջական չէր, սակայն գոյություն ունեին նաև Վրաստանի (մոտ կես միլիոն) և Հայաստանի (150-160 հազար) ադրբեջանական համայնքները, որոնցից վերջինը տեղափոխվեց Ադրբեջան: Տես Wikipedia.org-«Азербайджан» բառ-հոդվածը:

6 Տես Статистический ежегодник южно-кавказских стран 2000. Армения, Азербайджан, Грузия. Тасис. с. 395-397.

7 Հայտնի է, որ պատերազմի սկզբում Ադրբեջանին են անցել այդ երկրի տարածքում պահվող ԽՍՀՄ զինված ուժերի Անդրկովկասյան օկրուգի ռազմամթերքի հիմնական պաշարները, որոնց պահեստներից ռազմավարականը գտնվում էր Կիլյազի (Գիլյազի) (ադրբ.՝ Giləzi) ավանում, օկրուգայինները՝ Ադդամում, Նաստանիում, դիվիզիոնները՝ Գյուզդերեում, Գյանջայում, Լենքորանում և Նախիջևանում: Դրանցում առկա սպառազինության ընդհանուր քանակը գնահատվում էր 11 հազար վագոն՝ Հայաստանին անցած 500 վագոնի դիմաց: Տես Wikipedia.org, «Карабахская война» բառ-հոդվածը: .

8 Տվյալ համեմատության մեջ ԼՂՀ տնտեսական ու ժողովրդագրական ցուցանիշներն այնքան փոքր են, որ դրանք առանձին հաշվարկելու փոխարեն ներառում ենք Հայաստանի ընդհանուր ներուժի մեջ:

ԽՍՀՄ-ԿԱՎԿԱՍ
Ե (ԺԱ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (41) ԽՈՒՎԱՐ-ՄԱՐՏ, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

նավթամուղի կառուցումն ավարտելու և այլ էներգետիկ ծրագրերի գործարկման միջոցով Ադրբեջանը կարողացավ բեկում մտցնել Հայաստանի հետ հեռակա տնտեսական մրցակցության և դրա հետ կապված՝ բնակչության վերարտադրության ասպարեզներում, իսկ 2000-ական թվականների վերջերից անցավ հիմնական ռազմատեխնիկական ցուցանիշներով ևս վճռական առավելության հասնելու քաղաքականության իրականացմանը, այսինքն՝ **ռազմավարական գերակշռության** ապահովմանը:

Այսպես՝ այս մտահոգիչ իրադարձություններից մոտ մեկ տասնամյակ անց՝ 2008-ին, մեր հակառակորդի 1997-ին ունեցած 1,5 անգամի առավելությունը տնտեսության հիմնական բնագավառներում արդեն հասել էր մոտ 4-5 անգամի⁹: Իսկ 2011-ին, Հայաստանի Հանրապետության արձանագրած **17.941 միլիարդ դոլարի (մեկ շնչին՝ 5.384 դոլար)** խիստ համեստ համախառն ներքին արդյունքի դիմաց Ադրբեջանն արդեն ուներ **94.318 միլիարդ դոլարի (մեկ շնչին՝ 10.340 դոլար)** տպավորիչ արդյունք¹⁰:

2000-ականներին Հայաստանից առաջ պոկվելու և ուժերի հարաբերակցությունը փոխելու մտահոգիչ գործընթացներ արձանագրվեցին նաև ժողովրդագրական հաշվեկշռի ասպարեզում: Այսպես՝ շուրջ 10 տարի «տարօրինակ կերպով» անընդհատ 3 միլիոնի սահմանագծին տատանվող, իսկ իրականում նվազող Հայաստանի բնակչությունը 2011 թ. հոկտեմբերի 12-21-ի մարդահամարի տվյալներով կազմեց **3. 018.854**, որից հանրապետությունում մշտապես բնակվող՝ **2 . 871.771**: Ուստի որքան էլ անվիճելիորեն ուռձացված լինի մեկ տարի անց՝ 2012-ի մարդահամարով ստացված Ադրբեջանի **9. 493. 600**-ը, բոլոր դեպքերում, այն մեր երկրում առկա ռեալ ազգաբնակչությանն արդեն գերազանցում է 3 անգամով¹¹:

Մի փոքր այլ դրություն ստեղծվեց կողմերի հիմնական ռազմատեխնիկական ցուցանիշների բնագավառում, որոնց մի մասը թեև գաղտնի էր պահվում, բայց փոփոխությունների ընդհանուր միտումն այստեղ էլ ակնհայտ էր անգամ անգեն աչքով: Եվ որևէ գաղտնիք չենք բացի, եթե պնդենք, որ վերջին տարիներին ուժերի խարխլվող հարաբերակցությունը «դիմանում է» որակական որոշ ցուցանիշների և կողմերի միջև հավասարակշռության պահպանման նպատակ ունեցող Ռուսաստանի ռազմատեխնիկական աջակցության շնորհիվ:

Եզրակացությունը պարզ է. սկսած 1990-ականների վերջերից՝ Հայաստանը պարտություն է կրել Ադրբեջանից տնտեսական մրցակցության և դրա վրա հիմնվող՝ հակամարտող կողմերի ուժերի ու հնարավորությունների փոփոխության ասպարեզում: Հարց է առաջանում. ի վերջո, տարածաշրջանի և ընդհանրապես համաշխարհային պատմության մեջ այդ էրբ է եղել, որ հայր խաղաղ-տնտեսական մրցակցության ասպա-

9 Տե՛ս ԱՊՀ երկրների տնտեսական ցուցանիշների վիճակագրությամբ զբաղվող www.cisstat.com-ի համապատասխան տվյալները:

10 Տե՛ս Wikipedia.org-«Армения» և «Азербайджан» բառ-հոդվածները: Վերջին երկու-երեք տարիների ընթացքում Ադրբեջանի նավթարդյունաբերության, ուրեմն և՛ ողջ տնտեսության աճը սկսել է դանդաղել, սակայն չպետք է մոռանալ, որ դա ահագանգ է ոչ միայն մեր հակառակորդի, այլև մեզ համար, քանի որ արդյունքում սկսում են խարխլվել Ալիևների կլանի իշխանության տնտեսական հիմքերը, և մեծանում է հարևան երկրի ներսում առաջ եկող դժգոհությունը ռազմական գործողությունների վերսկսումով խլացնելու գայթակղությունը...

11 Տե՛ս The World Factbook <http://www.cia.gov>.

րեզում պարտություն կրի թուրքից, այն էլ՝ նրա հետամնաց-ադրբեջանցի տեսակից: Որովհետև անավարտ պատերազմի պայմաններում ծավալվող հեռակա մրցակցության մեջ պարտվել հակառակորդին՝ նշանակում է բացել նոր պատերազմի դուռը: Ավելին՝ չպետք է մոռանալ, որ երբ հակամարտող կողմերի միջև առկա **համեմատելի** ցուցանիշներն աստիճանաբար **անհամեմատելի** են դառնում, ապա նոր դիմակայության մեջ դրությունը չեն կարող փրկել անգամ զանգվածային խիզախությունն ու ինքնագոհությունը: Ուստի 1990-ականների վերջերին ու մանավանդ 2000-ականներին որքան ավելի առարկայացավ մեր հակառակորդի ուժերի ու հնարավորությունների աճի միտումը, այնքան Հայաստանի ղեկավարների մոտ ուժեղացավ այդ ամենը ոչ թե սեփական ջանքերով, այլ երրորդ կողմի, տվյալ պարագայում՝ Ռուսաստանի ռազմատեխնիկական աջակցությամբ փոխհատուցելու ձգտումը:

Ո՞րն էր խաղաղ մրցակցության ասպարեզում մեր պարտության պատճառը՝ սեփական հնարավորությունների պակասը, դրանք իրացնելու ցանկության բացակայությունը, թե՛ մեկ այլ՝ ավելի կարևոր գործոն: Տարբեր փորձագետների ուսումնասիրությունները, այդ թվում՝ «Վէմ» հանդեսում հրապարակված նախորդ գնահատականները¹² առարկայական փաստերով ցույց են տվել, որ անցած տասնամյակներում ո՛չ հնարավորությունների պակաս ենք ունեցել և ո՛չ էլ համապատասխան ցանկությունն է բացակայել, գոնե հրապարակային քաղաքականության մակարդակում: Ավելին՝ 1998-ի իշխանափոխության շրջանում տնտեսական մրցակցության մեջ հակառակորդին հաղթելու խնդիրը ձևակերպվել է անգամ որպես ռազմավարական առաջադրանք, որն այդպես էլ մնացել է ցանկությունների ոլորտում: Ուստի երբ անցած տասնամյակներին ոմանք անգոր կերպով մեզ մատնացույց էին անում Ադրբեջանի նավթը կամ գազը, որոնք համաշխարհային ասպարեզում վաղուց արդեն դադարել են լինել պետությունների մրցունակությունը պայմանավորող վճռորոշ գործոններ, հայ հանրության մտածող մասի համար ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում, որ մենք չունենք սեփական հնարավորությունների իրացման ցանկությունը ռազմավարական քայլերի վերածելու վճռանակությամբ լցված **ազգային-պետական ընտրախավ**: Ղարաբաղյան շարժման բովով անցած և նրա հաղթանակները սեփական դրոշը դարձրած Հայաստանի երրորդ Հանրապետության **նոր, բայց իրականում հին** պետական վերնախավն անցած տարիներին մեր հանրությանն ապացուցել է, որ ինքը ոչ միայն չի վերածվել ազգային-պետական ընտրախավի, այլև հետևողականորեն խոչընդոտել է դրա ձևավորման գործին:

Ժամանակը ցույց տվեց, որ Ղարաբաղյան շարժման գաղափարական ու բարոյական արժեքների իրական կրողներին ասպարեզից դուրս մղած, իսկ 1990-ականների կեսերից երկիրը ժողովրդավարության ու տնտեսական առաջադիմության հունից դեպի կլանային համակարգն ու մենաշնորհային տնտեսության բնորոշ առաջնորդած անկախ Հայաստանի պետական վերնախավը, խորհրդային համակարգից մնացած երկու նույնաբովանդակ «աղբյուրների» միախառնման և ապա տարանջատման գործըն-

12 Տե՛ս Մերուժան Վ. Միքայելյան, Հայաստանն արդիականացման մարտահրավերի առջև... «Վէմ», 2011, 3 (33), էջ 156-205:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
Ե (ԺԱ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (41) ԽՈՒՎԱՐ-ՄԱՅՐ, 2013
ՎԷՄ՝ ԽԱՄԱՆԿԱՅԻՆ ԿԱՆՈՒՆ

թացի ծնունդն էր. **առաջինը՝** 1960-ականներին Հայաստանում ծավալված ազգային-պահանջատիրական շարժման մեկուսացման¹³ և կեղծ- ժողովրդավարական այլախոհություն «աճեցնելու» շուրջ 20-ամյա գործընթացի 1980-ականների «արտադրանքն» էր: **Երկրորդը՝** Խորհրդային Ադրբեջանի կուսակցական-պետական վերնախավից 1980-ականների վերջերին տարանջատված՝ նրա դարաբաղյան հատվածի «երիտասարդական թևը»: Ուստի բնական է, որ այդ վերնախավը սկզբում զգուշավոր կերպով, իսկ 1990-ականների վերջերից բացահայտորեն Հայաստանում սկսեց ներդրնել ԽՍՀՄ-ի կենտրոնացված տնտեսության «տխուր ժառանգությունը»՝ այն մենաշնորհային համակարգը, որը շնորհիվ ահռելի բնական պաշարների, 1990-ականների վերջերից ժամանակավոր ծաղկում էր ապրում Ռուսաստանում: Ընդ որում, եթե Ռուսաստանում ու նաև Ադրբեջանում գոյություն ունեին նման համակարգի ձևավորման համար անհրաժեշտ բնական պաշարներ, ապա Հայաստանում դրանք բացակայում էին: Անցած 20 տարիներին մեր երկրին վերևից՝ պետության ղեկավարության կողմից, պարտադրվում էր «զարգացման» մի այնպիսի բնորդ, որի նպատակը ոչ թե անկախ կեցության հիմքերի ամրապնդումն էր, այլ հետխորհրդային տարածքը «ընդհանուր արժեհամակարգի» շրջանակներում պահելու ցանկությունը: Բնական է, որ նման քաղաքականության կիրառումը նախատեսում էր Հայաստանի ինքնուրույն զարգացման միակ իրական պաշարի՝ 1970-1980-ականներին մեր երկրում ստեղծված և լուրջ հույսեր ներշնչող տեխնոլոգիական հնարավորությունների քայքայումը և մտավոր ներուժի զգալի մասի դուրսմղումը: Ուստի նրանց զարգացման համար անհրաժեշտ դրամական միջոցներն ուղղվեցին 1990-ականների վերջերից մեզանում ծաղկում ապրած դոյակաշինության և զվարճանքի վայրերի ստեղծման բնագավառը, այսինքն՝ պարզապես «հողին հանձնվեցին»:

Մինչդեռ զարգացման որակական պաշարների հաշվարկված օգտագործման շնորհիվ 1980-ականներին տեխնոլոգիական հնարավորությունների և մտավոր ներուժի առումով Խորհրդային Հայաստանի հետ նույն մակարդակի վրա գտնվող Մերձբալթիկայի հանրապետությունները իրենց անկախության ընթացքում թռիչքաձև զարգացում ապահովեցին, որի արդյունքում՝ այսօր մոտավորապես նույն՝ 3-3.2 մլն բնակչությունն ունեցող Լիտվայի և Լատվիայի բյուջեները բազմակի անգամ գերազանցում են Հայաստանի համապատասխան տվյալները¹⁴:

Անլուրջ է այս ամենի մեջ Ղարաբաղյան շարժմանը «մեղադրելը», որովհետև նրանից ծնված ազգային եռանդը միայն ու միայն առաջընթացին նպաստող գործոն էր: Հաշվարկները ցույց են տալիս, որ որակական պաշարների՝ տեխնոլոգիական ու մտավոր հնարավորությունների գործարկման համար էական չէր նաև Հայաստանի մասնակի շրջափակման փաստը: Միակ էական գործոնը անկախացած Հայաստանի նոր, բայց իրականում հին պետական վերնախավի անհամապատասխանությունն էր արդիական պետության ձևավորման հիմնախնդրին: Ժամանակը ցույց

13 Տե՛ս «ՎԷՄ» ի ներկա համարում տեղ գտած **Նիկոլ Վ. Կարապետյանի** «Իսկ գործնական օգնություն... Պատասխան ՀՅԳ պատմության խորհրդային կեղծարարներին» հրապարակումը:

14 Տե՛ս Wikipedia.org –«Литва» և «Латвия» բառ-հոդվածները:

տվեց նաև, որ նրա երկու թևերը իրենց «պարտվողական» ու «հաղթողական» կեցվածքների դիմակայության նմանակումներով ծառայում էին Ղարաբաղյան հիմնահարցի շահարկման միջոցով Հայաստանը **աշխարհաքաղաքական պատանդի** վերածելու խնդրի լուծմանը: Նույն շինծու օրակարգի ծնունդն էր նաև ազգը «հայաստանցիների» ու «ղարաբաղցիների» բաժանելու գործընթացը, ինչը թույլ տվեց էլ ավելի կառավարելի դարձնել «պարտվողականների» և «հաղթողականների» դիմակայությունը, որի վերջին՝ 2008-ի մարտիմեկյան արարից հետո երկիրն ընկղմվեց լճացման ու կատարյալ պարապուրդի գիրկը:

Իսկ 2008-ից հետո «վայելքների շրջանը» թևակոխած Հայաստանի նոր-հին վերնախավը անցած 5 տարիներին փաստորեն փող աշխատելուց բացի որևէ այլ նպատակ չունեց, ուստիս **փողապետության** վերածված երկիրը ներքաշեց հայ-թուրքական արձանագրությունների և այլ ձախողված գործարքների մեջ: Ավելին, տնտեսական ճգնաժամի ու լճացման պայմաններում, այս շրջանում երկրի արտաքին պարտքի **գրեթե եռապատկման** «համաշխարհային ռեկորդը» սահմանած Հայաստանից շարունակվող արտագաղթը վերածվեց զանգվածային փախուստի: Եվ համընդհանուր հուսալքության մթնոլորտում աննկատ կերպով մոտեցած Ղարաբաղյան շարժման 25-ամյակը, եզրափակելով մեր նորագույն պատմության 25-ամյա շրջափուլը, ակնհայտ դարձրեց Հայոց պետականության հիմքերի քայքայման գործընթացը:

Այստորոշումը պարզ է. Ղարաբաղյան շարժման և պատերազմի արդյունքում Հայաստանը մի կողմից՝ դե-յուրե անկախացել է, իսկ դեֆակտո նաև հայրենի տարածքներ է ազատագրել, բայց մյուս կողմից՝ Շարժման ընթացքում Հայաստանին ու Ղարաբաղին պարտադրված նոր-հին վերնախավի միջոցով աստիճանաբար սկսել է զրկվել սեփական ճակատագիրը տնօրինելու հնարավորությունից:

Իսկ **ախտաձանաչումն** ավելի բարդ է. մեզանում անկախության տարիներին ակնհայտ է դարձել երկրի զարգացման ներքին ազդակներն արթնացնող կենսական եռանդի թուլացման միտումը, ինչը հնարավորություն է տվել Հայաստանի պետական վերնախավին իրական խնդիրների լուծումը փոխարինելու ազգային **արժեքների ու խորհրդանշանների** շուրջ թատերականացված նմանակումներով (իմիտացիաներով): Դեռևս 20-րդ դարի սկզբներին ամերիկացի նշանավոր գրող **Էլջին Գրոսքլոուսն** էր նկատել, որ Հայաստանում «...խորհրդանշանները կազմում էին կյանքի էությունը»¹⁵: Խորհրդանշաններն, իսկապես, սրբազան տարածք են մեզ նման հին ժողովուրդների համար, որովհետև իբրև հավաքականություն հաճախ գոյատևել ենք դրանք տարուների վերածելու, այլ ո՛չ թե մեր հետագա զարգացման ազդակները դարձնելու միջոցով: Անկախությունն ակնհայտ է դարձրել, որ մեզանում չի ձևավորվում ազգային արժեքների ու խորհրդանշանների էության կրեատիվ ընկալումը, ինչը

15 Տե՛ս **Է. Գրոսքլոուս**, Արարատ, անգլերենից թարգմանեց Սվետլանա Թումանյանը, Եր., «Գրական Հայրենիք», 2005, էջ 399: Այս արժեքավոր փիլիսոփայական վեպի գաղափարական բովանդակության քննությունը տես «ՎԷՄ»-ի ներկա համարում հրատարակվող՝ **Ալբերտ Ա. Մակարյանի և Սվետլանա Ռ. Թումանյանի** «Էլջին Գրոսքլոուսը և իր «Արարատ» վեպը»... ծավալուն ուսումնասիրության մեջ:

ԵՄԲԱԳՐԱԿԱՆ
Ե (ԺԱ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (41) ԽՈՍՎԱՐ-ՄԱՅՈՒ, 2013
ՎԷՄ՝ ԿԱՆԱԿԱՅԱԿԱՆ ԿԱՆՈՒՆ

պետության համակեցական տեսլականը հստակեցնելու վճռորոշ պայմանն է: Մնալով **հիշողության** դաշտում՝ չենք կարողանում «ռացիոնալացնել» արժեքներն ու խորհրդանշանները՝ որպես հին հնարավորությունները «բացելու» նոր պատուհաններ: Ուստի օգտվելով դրանից, Հայաստանը ղեկավարող նոր-հին վերնախավը մեր հավաքական նպատակները շարունակաբար վերածում է վեհ, բայց խիստ անորոշ կարգախոսների և դրանք ծառայեցնում իր նպատակներին:

Այս համատեքստում վերջինիս հաջողվել է ստեղծել նաև Ղարաբաղյան շարժման իդեալներին հավատարմության իր կեղծ հղացքը, որը հիմնված է ոչ միայն ժողովրդի հաղթանակի յուրացման, այլև **ժողովրդին հաղթելու** նպատակադրումի վրա: Համաձայն այդ հղացքի՝ ազգային հպարտության խորհրդանշան Ղարաբաղը մի յուրահատուկ **ինդուլգենցիա** է, որն ամեն անգամ ապահովում է Հայաստանի պետական վերնախավի մեղքերի թողությունը: Մինչդեռ, իրականությունն այն է, որ նման սրբազնացված խորհրդանշանն ի չարս օգտագործելու միջոցով երկրի զարգացման ու հզորացման ընթացքի կասեցումը «հեռակա մահավճիռ» է հենց իր՝ կենդանի ու շնչող Ղարաբաղի համար: Երբ հակառակորդն ուժեր է կուտակում, հասարակությանը մոլորեցնելու այդօրինակ գործելակերպը նրան շեղում է այն իրողության գիտակցումից, որ 1994-ի մայիսից սկսած՝ Շարժման իդեալներին մեր հավատարմության աստիճանը չափվում է միայն ու միայն ներքաղաքական ու ներազգային օրակարգերի կոնկրետությամբ ու հստակությամբ:

Նման պայմաններում այսօր՝ Ղարաբաղյան շարժման սկզբնավորումից 25 տարի անց, արթնացել է երկրի գահավիժող ընթացքից անհանգստացած Հայաստանի քաղաքացիների **ինքնապահպանման բնագոյը**, որոնք «ընտրություններում» ձեռք բերվող «բարիքներով» պարբերաբար հաճույք ստանալու փոխարեն հանգել են սեփական ճակատագրին տեր կանգնելու անհրաժեշտության գիտակցմանը: Այսինքն՝ ժողովուրդը բնագդաբար սկսել է ըմբռնել իր ռեալ բովանդակությունից՝ մարդուց դատարկվող ազգային արժեքների ու խորհրդանշանների իռացիոնալ պաշտամունքի շահարկումից բխող վտանգները:

Ուստի ստեղծված իրավիճակում մեծագույն **կամք** ու նաև **զգուշություն** է հարկավոր մի կողմից՝ քաղաքացիական գիտակցության վերելքի և ինքնակազմակերպման ճանապարհով ներքին բարեփոխումների հասունացած խնդիրը տեղից շարժելու, իսկ մյուս կողմից՝ արտաքին ճակատում «կտրուկ շարժումներից» խուսափելու համար: Այս բարդագույն առաջադրանքն իրականացնելու գործում Հայաստանի ու հայության հիմնական դաշնակիցը **ժամանակն** է, որն առայժմ բարեհաճ է մեր հանդեպ:

Ամփոփելով Ղարաբաղյան շարժման 25-ամյակի հաշվեկշիռը, պարտավոր ենք կրկին ու կրկին խոստովանել դառն ու ամոթալի **ճշմարտությունը**. պատերազմում ձեռք բերված փայլուն հաղթանակից հետո՝ խաղաղ մրցակցության մեջ, հազարամյակների պատմություն ունեցող քաղաքակրթությունը պարտվել է երկու-երեք սերունդ առաջ Մուղանի տափաստաններում ու հարակից լեռներում խաշնարածությամբ զբաղվող, իսկ այժմ նավթահորերում «սև ոսկի» արդյունահանող հարևան բարբարոսներից ու կիսաբարբարոսներից, որոնց պապերը մի քանի տասնամյակ

առաջ չգիտեին անգամ, թե ինչ է դրանք, ուստիև սեփական հարստությունը չափում էին... ոչխարների գլխաքանակով: Այդ պատճառով ակնհայտ է դառնում, որ եթե 1990-ականներին նրանց արշավանքը հետ ենք մղել **հիմնականում** մեր սեփական ներուժ-կարողականության շնորհիվ, ապա այդ թանկագին ձեռքբերումը ներկայումս պահպանվում է **հիմնականում** արտաքին ուժերի բարենպաստ դասավորության հետևանքով: Իսկ դա նշանակում է, որ մեր առջև առայժմ բաց է ներքնապես մաքրվելու և ամրապնդվելու թերևս վերջին **ժամանակային պատուհանը**:

Ուրեմն՝ հավատարմությունը Ղարաբաղյան շարժման իդեալներին հրամայաբար պահանջում է 1988-ի օրինակով նորից սեփական կամքը պարտադրել Հայաստանի պետական վերնախավին՝ նրան դարձնելով ոչ թե արտաքին իրողությունների, այլ հայ ժողովրդի պատանդը: Դա է 1988-ին սկսված Ղարաբաղյան շարժման այն անանց **խորհուրդը**, որը խիստ արդիական է մեր օրերում:

Հակառակ դեպքում Հայաստանի համար բարենպաստ աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունից հետո, Ղարաբաղյան շարժման ու պատերազմի արդյունքում առաջին անգամ հիմնավորապես ձախողված մեր հարևան բարբարոսներն ու կիսաբարբարոսները իրենց հերթական արշավանքը կձեռնարկեն մեր ժողովրդի դեմ, կոչնչացնեն կամ դուրս կմղեն նրան և ազգային արժեքների ու խորհրդանշանների «պատկերասրահից» այդպես էլ ռեալ իրականություն չտեղափոխված քաղաքակրթության ավերակների վրա կամրապնդեն իրենց ցեղասպան պետությունը, որի դեմ ուղղված բողոքի ցույցերի մեջ աստիճանաբար կմարի հերթական անգամ սեփական հողից կտրված հայոց կենսական եռանդի մնացած մասը:

Խմբ.:

**THE BALANCE OF NAGORNO-KARABAKH MOVEMENT'S
25th ANNIVERSARY**

Editorial

ԽՄԲԿԲԿՄԿԿՆ
Ե (ԺԱ) ցարի, թիվ 1 (41) հունվար-մայր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես